ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով Սահմանադրության 177-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ և 145-րդ հոդվածներով՝ խմբակցությունը որոշեց.

1.Գլխավոր դատախազի պաշտոնում թեկնածու առաջադրել Աննա Կարենի Վարդապետյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը:

3.Խմբակցության որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

16.06.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281